Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(27 փետրվարի, 2014 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եկայք զկնի իմ եւ արարից զձեզ
որսորդս մարդկան» (Մատթ. Դ. 19):

Սիրելի՛ հավատացյալներ,

Հավիտենական է Աստծո խոսքը, մշտապես նոր եւ փոխակերպող: Երկու հազար տարի առաջ ուղղվեց այս հրավերը ձկնորսներին, եւ նրանք, վայր դնելով հանապազօրյա հացը վաստակելու միջոց ուռկանը, Քրիստոսի լուծն առան իրենց ուսերին՝ երկնավոր հացի բաշխողը դառնալով ի սիյուռս աշխարհի: Չկարծեք, թե նրանք երկնառաք հրեշտակներ էին՝ լեցուն աստվածային իմաստությամբ, օժտված աստվածճանաչողությամբ կամ գիտությանց վարժ: Հասարակ ձկնորսներ էին, պարզ մարդիկ, մեզ նման ենթակա սայթաքումների, հպարտանալու, ինչու ոչ՝ թերահավատության: Գալիլիայի ափին, սակայն, Տիրոջ մի խոսքով ձկնորսները վերափոխվեցին առաքյալների եւ առանց երկմտելու գնացին կանչին ընդառաջ՝ թողնելով ամեն, ամեն ինչ՝ թե՛ անուն, թե՛ ընտանիք եւ թե՛ ապրուստ: Նրանք նոր ծնունդ, նոր անուն, նոր կյանք ստացան:

Աղոթքով լեցուն, հավատքով օծուն այս կամարները, սիրելինե՛ր, վկաներն են բազմաթիվ հոգեւոր ծնունդների, ականատեսն են Սուրբ Հոգու շնորհների բաշխման, որոնք երկնքից առատապես հեղվել են Միածնի իջման Սուրբ Սեղանին ծնկած կոչվածների վրա՝ Սուրբ Հոգու աներեւույթ հպումով օծելով նրանց որպես Բանին Աստուծո սպասավորներ:

Այսօր կրկնակի տոն է մեր ժողովրդի համար: Տղմուտի ափերին Վարդանանց նահատակ քաջերի արյունով սրբված այս օրը, Միածնաէջ այս Սուրբ Տաճարում, նոր հրավեր ենք ուղղում ճեմարանում եւ քահանայից լսարանում իրենց մտքի, կամքի եւ հոգու ուռկանները կարգի բերած այս տասը սանին՝ ձեռնադրելով նրանց որպես հոգեւոր պայքարի քաջամարտիկներ: Շնորհընկալ եւ հոգեկիր երեցներ եղաք ձեռքի հպումով (տե՛ս Գործք ԺԴ. 22) սրբալույս մյուռոնի օծմամբ՝ դառնալով երկու հազարամյակ ձգվող սրբազան խորհուրդի մասնակիցներ:

Սուրբ Խորանին կանգնած այս նորաօծ հոգեւորականներից յուրաքանչյուրը, սիրելի՛ հավատացյալներ, իր սիրտը բացեց եւ ընդառաջ գնաց այն կանչին, որը դժվարագույններից է մարդկային կյանքում: Նրանք համաձայնեցին լինել մարդկանց որսորդներ, հանձն առան եւ ուխտեցին Զեբեդիոսի որդիների նման ամեն ինչ սիրով կատարել, սուրբ հայրապետների կանոններով առաջնորդվել եւ երբեք նրանցից չխոտորվել կամ չնահանջել (հմմտ. Մաշտոց):

Նորաօծ հայրեր, եթե առաքյալները տեղյակ էին Քրիստոսի քարոզչությանը, գիտեին Նրա մկրտության մասին, տեսել ու լսել էին Նրան, ապա դուք հետեւող եք սուրբ հայրապետներին, սերտել եք Սուրբ Գիրքը եւ ծանոթ եք ավանդությանը: Եթե առաքյալները գիտեին եւ ընտրեցին այն ճանապարհը, որն ուներ թե՛ հավատի ամրացման, թե՛ այն սասանելու պահեր, փորձվեցին եւ ամրացան, ի վերջո հաղթանակեցին Քրիստոսի խաչի զորությամբ՝ ողջ մարդկության պատմության մեջ մնալով որպես անսասան հավատի, աներկբա ընթացքի, անսակարկ նվիրումի, անկոտրուն կամքի անկրկնելի մարմնացումներ, ապա դուք, նորոգ կանչվածներ, նրանց օրինակով պիտի վերստին կենդանացնեք նվիրական այս առաքինությունները՝ հայ հոգեւորականին բնորոշ կենսակերպ եւ հատկանիշներ դարձնելով դրանք:

Առաքինությունները, սիրելինե՛ր, մեր հոգեւոր եւ ազգային արժեքներն են, որ դարերով կերտել են մեր ազգի, ազգի յուրաքանչյուր զավակի ինքնությունը: Դրանք իմաստ եւ բովանդակություն են հաղորդել եւ շավղել մեզանից յուրաքանչյուրի կյանքի ուղին: Մենք ենք ընտրել այն ճանապարհը, որի վրա ենք եւ շարունակում ենք լինել: Մեր ընտրությունը մեր կյանքի իմաստն է: Արդ՝

Դու, որ ուսուցիչ ես եւ մազերդ արծաթել ես իմաստությանդ ավիշով սերունդ կրթելով,

Դու, որ զինվոր ես եւ պատրաստ ես վասն հայրենյաց եւ հավատո կյանքդ մատաղելու,

Դու, որ բժիշկ ես եւ աստվածապարգեւ կյանքը արարչաստեղծ ձեռքերիդ մեջ երկարացնելու շնորհն ունես,

Եւ դու, նորաօծ, որ ուխտել ես կյանքդ Աստծուն եւ ժողովրդին ընծայել, դեռ հարց պիտի տա՞ս քո կյանքի իմաստի, կոչումի եւ նպատակի մասին: Այլեւս զուր են փնտրտուքները: Նոր արժեքներ հնարել կամ ստեղծել պետք չէ, դրանք կան, պարզապես պիտի վերադառնալ եւ դրանք արժեւորել:

Մեր ազգին, ժողովրդին բնորոշողը աստվածպաշտությունն է, հայրենասիրությունը, նվիրումը, անձնազոհությունը, ծառայասիրությունը, նահատակության ոգին: Հայ ազգին, իր բոլոր բնորոշումներով, բյուրեղացնելով աստվածաբան եւ սուրբ վարդապետ Եղիշեն, սահմանել է որպես Ավետարանի եւ Եկեղեցու զավակ, իսկ մարդաբանությունը՝ աստվածազգեստ:

Այսօր, աշխարհի բոլոր ծագերում Հայ Եկեղեցին տոնում է սրբոց Վարդանանց տոնը, ազգովին բարեխոսությունն ենք հայցում հազար երեսուն եւ վեց սուրբ կանչվածների, քաջ նահատակների, ովքեր իրենց անձը դրեցին հավատի եւ հայրենյաց զոհասեղանին: Մի ամբողջ ազգ Ավարայրում փորձվեց եւ փրկվեց մի աներեւույթ ձեռքի միջոցով: Ամենաողորմած Տերն էր, որ տեսնելով հայ ազգի հավատքը, հայրենի հողին նահատակվելու ոգին, Իրեն ուղղված հուսառատ հայացքը՝ անսաց սրտաբուխ աղոթքին մեր փոքր ածուի եւ Տղմուտի ջրերը նոր հավատքի մկրտության, իսկ Ավարայրը՝ արյան մկրտության փրկարար նավակի վերածեց: Ավարայրը չի կարող հայի համար հուշ լինել, Ավարայրը չի կարող լոկ պատմություն մնալ, այն հայ տեսակի՝ Աստծուն որդեգրվելու պանծալի ուղու պսակումն է: Մի ամբողջ ժողովրդի լավագույն զավակները՝ ռամիկ, շինական, իշխան, զորական, ուսուցիչ, վարդապետ ոտքի կանգնած գնում էին նահատակվելու այն հայրենքի ու այն Տիրոջ համար, որտեղից

նոր կյանք սկսվեց Նոյով, եւ Ով Իր կյանքը տվեց հանուն նոր մարդկության փրկության: Ինչպես Աստված Աբրահամին փորձեց, հրամայելով նրան՝ իր միակ որդուն զոհ մատուցել, բայց խնայեց, այնպես եւ հայ ժողովրդին փորձեց՝ Իր իսկ ձեռքով փրկելով: Եւ մենք հաղթեցինք այդ փորձության մեջ:

Վարդանանք մեր ժողովրդի պատմության եւ հիշողության մեջ դաջված են իբրեւ հավատասիրության, հայրենասիրության եւ արիության խորհրդանիշներ, եւ այս բոլորը անառարկելի է: Սուրբ Վարդանանք այն հերոսներն են, ովքեր լսեցին Աստծո կանչը, ովքեր իրենց մաշկի գույն եւ զրահ դարձրին Քրիստոսի հավատը: «Խենթեր են սրանք, - բնութագրել է Հազկերտը:» Ինչպես կարելի է մի բուռ մարդկանցով ելնել հսկա զորքի դեմ, որի քայլքի տակ դողում է երկիրը բիբլիական: Եւ կդողար, այդպես էլ կլիներ, եթե այս ամենը զուրկ լիներ իմաստից, զուրկ լիներ ճշմարիտ հավատը չդավաճանելու կուռ համոզումից: Վստահ ենք, որ Ավարայրից հետո ոչ միայն պարսիկը, այլեւ անդեմ յուրաքանչյուր թշնամի հասկացավ, թե ով է հայը, եւ թե Տերն է հայի լույսն ու կյանքը, նա ումի՞ց պիտի երկնչի (Հմմտ Սաղմոս): Հային չի փոխել ժամանակը, չեն փոխել մարտահրավերները, ապացույցը՝ Սարդարապատն է, Բաշ Ապարանը, Զանգեզուրը, Արցախը:

Փառք եւ գոհություն Աստուծո, պատերազմական նահատակությունների առիթը չունենք: Այսօր բյուրավոր մեր քաջազն վարդանները հսկում են հայոց սահմանները, հարկ եղած դեպքում արյունով վերահաստատում՝ դառնալով Սուրբ Վարդանի հազար երեսուն եւ յոթներորդ զինվորը: Եւ դուք, նորաօծ քահանա հայրեր, որ նվիրաբերվեցիք Սուրբ Սեղանի սպասավորությանն ու Աստուծո կենդանի խոսքի քարոզչությանը, Սուրբ Ղեւոնդի կողքին կանգնած դարձեք ոգեշնչող պահապանները այն ամրոցի, որ կոչվում է հայկական ՈԳԻ:

Բարեպաշտ հայորդիներ, եռապատկված է մեր ուրախությունն այսօր, քանզի տոնում ենք ազգիս Հայրապետի Անվանակոչությունը: Պատահական չէ ընտրված օրը, քանզի Վարդանանց մեջ էր նաեւ Գարեգին քաջամարտիկ զորավարը, ում անունը կրում է ազգիս Վեհափառը: Ամենայն Հայոց Հայրապետը այն զորագլուխն է, այն առաջնորդը, ով մեր Եկեղեցին ուղղորդում է դեպի խաղաղության ու բարօրության անհունները, այն Հովվապետը, ով իր Խաչը պարզած վկայում է Քրիստոսի ճշմարիտ վարդապետությունը, եւ մեզ սովորեցնում ճշմարտության անշեղ ճանապարհները:

Վեհափառ Տեր, հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ուխտապահ եւ նվիրյալ ողջ միաբանության, պաշտոնեության եւ հավատացելոց, թույլ տվեք շնորհավորել Ձերդ Սրբությանը Ձեր անվանակոչության առիթով: Թույլ տվեք նաեւ Ձեր անունից շնորհավորել բոլոր այն հայորդիներին, ում անվանակոչության օրն է այսօր եւ Ձեր օրհնությունը փոխանցել նրանց: Երկար տարիների անսասան գահակալություն ենք մաղթում Ձեզ: Ձեր տեսիլքների մարմնացման կենդանի վկաներս աղոթում ենք, որ Տերը Սուրբ Վարդանանց, Ձեր հովանավոր Սուրբ Գարեգինի բարեխոսությամբ հավելի կյանքի օրերը Ձեր՝ ի փառս մեր Հայրենիքի եւ ի պայծառություն մեր Եկեղեցու: